



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ. փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

20.09.2011 N \_\_\_\_\_

**ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Ջերմորեն շնորհավորում եմ հայ ժողովրդի բազմադարյա ու հերոսական պատմության ամենաառանցքային իրադարձության՝ Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առիթով:

Տոնական այս բացառիկ օրվա կապակցությամբ պետք է մաղթենք, որ Հայաստանի Հանրապետության Անկախության տոնն իր ոգևորիչ և ցանկալի ներկայությամբ մշտապես դառնա մեր նորօրյա ձեռքբերումների և հաղթանակների յուրօրինակ խորհրդանիշը:

Թո՛ղ որ, հաջորդող բոլոր տարիներն իրենց բարենպաստ ազդեցությունն ունենան ժողովրդավարական արժեքների լիարժեք կայացման գործում և Հայաստանի Հանրապետությունում միմիայն գերակայեն խաղաղությունն ու համերաշխությունը՝ իրականություն դարձնելով մեր համազգային բոլոր նպատակներն ու նախաձեռնությունները:

Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա կապակցությամբ դարձյալ շնորհավորում եմ և բարենաղթում, որ մեր բոլոր հայրենակիցներին ուղեկցեն բարօրությունն ու հաջողությունները:

*Հարգանքներով*

**Վ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**